

Նախապատ-
րաստեք
ամեն
անհրաժեշտ
բան



ԸՆՏՈՒՄԻՔԻ ԵՆԱԿԻՆ
ԿՈՄԻՏԵ

Առաջին Նախագահության Ուղերձ

Միրելի Եղբայրներ և Քույրեր,

Մեր Երկնային Հայրը ստեղծել է այս գեղեցիկ երկիրը իր ողջ առատությամբ՝ մեր օգտի և օգտագործման համար: Նրա նպատակն է ապահովել մեր կարիքները, երբ մենք քայլում ենք հավատքով և հնազանդությամբ: Նա սիրով պատվիրել է մեզ «նախապատրաստել ամեն անհրաժեշտ բան» (տես ՎևոՒ 109.8), որպեսզի, երբ անբարենպաստ պայմաններ գան, մենք կարողանանք հոգ տանել մեր և մեր հարևանների մասին և աջակցենք եպիսկոպոսներին, երբ նրանք հոգ են տանում մյուսների համար:

Մենք խրախուսում ենք Եկեղեցու բոլոր անդամներին ողջ աշխարհում նախապատրաստվել կյանքում անբարենպաստ պայմանների համար՝ ունենալով ուտելիքի և ջրի պաշար և որոշ խնայած գումար:

Մենք խնդրում ենք, որ դուք իմաստուն լինեք, երբ ուտելիքի և ջրի պաշար եք հավաքում և խնայողություններ կատարում: Մի գնացեք ծայրահեղության. խելամիտ չէ, օրինակ՝ պարտքերի մեջ ընկնել՝ միանգամից ուտելիքի պահեստ հիմնադրելու համար: Ուշադիր ծրագրավորման միջոցով, դուք կարող եք ժամանակի ընթացքում հիմնադրել տնային պահեստամթերքներ և ֆինանսական խնայողություններ կատարել:

Մենք հասկանում ենք, որ ձեզանից ոմանք, հնարավոր է, չունեն ֆինանսական միջոցներ կամ տարածք այդպիսի պահեստի համար: Ոմանց էլ, հնարավոր է, օրենքով արգելվում է մեծ քանակությամբ մթերքներ պահեստավորել: Մենք խրախուսում ենք ձեզ պահեստավորել այնքան, որքան պայմանները թույլ են տալիս:

Թող Աստված օրհնի ձեզ տնային ձեր պահեստը ստեղծելու ջանքերում:

Առաջին Նախագահություն



ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՈՆԱԽԻՆ ԱԿԱԽԵՍՏԻ ԻՒՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Երեքամսյա պաշար



Ստեղծեք մթերքների փոքր պաշար, որը ձեր նորմալ, ամենօրյա օրաբաժնի մի մասը կարող է լինել: Դա ամելու ուղիներից մեկը ամեն շաբաթ մթերքի մի քանի տեսականի հավելյալ գնելն է՝ մեկ շաբաթվա պաշար ստեղծելու համար: Ապա դուք կարող եք աստիճանաբար մեծացնել ձեր պաշարը, մինչև այն բավական դառնա երեք ամսվա համար: Մթերքի այդ տեսականին պետք է կանոնավորապես թարմացնել փշանալուց խուսափելու համար:

Խմելու ջուր



Խմելու ջուր հավաքեք այն դեպքերի համար, երբ ջրամթարները կարող է կեղտոտվեն կամ վնասվեն:

Եթե ջուրը գալիս է լավ, մախապես ախտահանված աղբյուրից, ապա անհրաժեշտ չէ լրացուցիչ մաքրում, հակառակ դեպքում՝ մախքան օգտագործելը ջուրը ախտահանեք: Ջուրը պահեք ամուր, հերմետիկ, չջարդվող ամաններում: Նկատի առեք օգտագործել պլաստիկ շշերը, որոնք սովորաբար օգտագործվում են հյութերի և գազով ջրերի համար:

Պահեք ջրի ամանները ջերմային աղբյուրներից և արևի ուղղակի լույսից հեռու:

Ֆինանսական պահուստ



Հիմնադրեք ֆինանսական պահուստ՝ խնայելով մի քիչ փող ամեն շաբաթ և աստիճանաբար ավելացնելով այն, մինչև հասցնեք մի պատշաճ գումարի («Նախապատրաստեք ամեն անհրաժեշտ բան. ընտանեկան ֆինանսներ» ուղեցույց):

Երկարատև պաշար



Երկարատև կարիքների համար, որտեղ թույլ է տրվում, աստիճանաբար ստեղծեք ուտելիքի պաշար, որը կդիմանա երկար ժամանակ, և որը կարող եք օգտագործել կենդանի մնալու համար, ինչպես օրինակ՝ ցորեն, սալիտակ բրինձ և լոբի:

Մթերքի այս տեսակները կարող են դիմանալ 30 տարի կամ ավելի, եթե ճիշտ փաթեթավորվեն և պահեստավորվեն սառը, չոր տեղում: Այս մթերքների մի մասը կարելի է թարմացնել՝ օգտագործելով հիմը ձեր երեքամսյա պաշարում:

«Կազմակերպեք, նախապատրաստեք ամեն անհրաժեշտ բան.

և հաստատեք մի տուն, այսինքն՝ աղոթքի տուն,

ծոմապահության տուն, հավատքի տուն,

ուսման տուն, փառքի տուն,

կարգ ու կանոնի տուն» (ՎևոՒ 109.8):

*Տնային պահեստի մասին լրացուցիչ
տեղեկությունների համար այցելեք
www.providentliving.org
ինտերնետային կայքը:*

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2007 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in the USA
English approval: 3/07
Translation approval: 3/07

ARMENIAN



04008 201